

ՀՀ Արարատի մարզպետ Ռուբիկ Աբրահամյանի շնորհավորական ուղերձը Բուժաշխատողի օրվա կապակցությամբ

20.06.2014



Հարգելի բուժաշխատողներ

Բոլոր ժամանակներում էլ մեր ժողովուրդը խորին հարգանքով է վերաբերվել բժշկի մասնագիտությանը: Այսօր էլ բուժաշխատողի աշխատանքից է մեծապես կախված կյանքում ամենակարևորը և թանկարժեքը՝ մարդու առողջությունը:

Խիստ կարևորելով բուժաշխատողի դերն ու նշանակությունը հասարակության մեջ, շնորհավորում եմ ձեզ մասնագիտական տոնի առթիվ: Մաղթում եմ առողջություն, երջանկություն և հաջողություններ ձեր մարդասիրական ու պատասխանատու աշխատանքում:

Վստահ եմ, որ արժանավայել կրելով ձեր պատվավոր կոչումը, հավատարիմ կմնաք ձեր երդմանը, նվիրումով կկատարեք ձեր աշխատանքը և բարեխիղճ կլինեք ձեր գործունեության մեջ:

Շնորհավորելով կրկին անգամ, ցանկանում եմ միշտ խաղաղ պայմաններում կատարեք ձեր աշխատանքը և ազգաբնակչության բարձր գնահատանքի արժանանալուց բացի ունենաք նոր մասնագիտական նվաճումներ ու վերելքներ:

ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ՝ Ռ.ԱԲՐԱՀԱՄՅԱՆ